

**Հասկացությունները որպես լեզվամշակույթի և  
բարոյագեղագիտական գործոնների  
արտահայտիչներ**

*Հասարակական կյանքի կենդանի հոսքի հետ կապված «հասկացություններն» իրենց մեջ կրելով այդ կյանքի տարբեր դրսևորումները (ընկալումները), ներկայացնելով միջգիտակարգային բնագավառների՝ կրոնին, փիլիսոփայությանը, հոգեբանությանը, իրավունքին, սոցիոլոգիային և այլ գիտակարգերին հատուկ ընկալումները, չի կարող որոշակիորեն չփոխվել, չհարմարվել ժամանակին ու նրազադափարագեղագիտական շարժընթացին: Ազգակցական, բարեկամական, և ամուսնական կապեր արտահայտող բառերը ըստ հետազոտողների իրենց մեջ կրում են հոգևոր մշակույթի մասին տեղեկույթ ու ժամանակային պահանջմունքներից:*

*Բանալի բառեր. ազգակցական, բարեկամական և ամուսնական կապեր, հոգևոր մշակույթ, փոխակերպում, պահպանել նշանակությունը, վերնշանակություն:*

Ազգակցական, բարեկամական, և ամուսնական կապեր արտահայտող բառերը ըստ հետազոտողների իրենց մեջ կրում են հոգևոր մշակույթի մասին տեղեկույթ ու ժամանակային պահանջմունքներից: Եթե, օրինակ, «ընտանիքը» ոչ վաղ անցյալում ընկալվում էր իբրև գերագույն սրբություն, որը պահպանվում էր եկեղեցու և պետականության հովանու ներքո, այսօր կարծես թե կորցնում է իր երբեմնի ակնածալի դիրքը՝ կապված եկեղեցու դերի նվազման հետ, բարքերի համընդհանուր ազատականացման, սոցիալ-տնտեսական վատթար վիճակի, շուկայական-գործնական ընկալումների գերակայացման և այլ կազմաքանդիչ նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական բազում գործընթացների ու տարիմաստ որոշ նկրտումների իրականացման հետ: Ինչպես և մյուս՝ հիմնարար նշանակություն ունեցող հասկացությունները, «ընտանիքը» ևս ենթարկվում է տարաբնույթ «հարձակումների», որոնք հեռահար նպատակ ունեն կազմալուծել այդ նվիրական կառույցը, որը սուրբ հայրերի խոսքով նույն քրիստոսյան-ընդհանրական եկեղեցու օրինակն ու պատկերն է՝ մարդկային-հասարակական կյանքից ներս: Քանի որ հասկացությունները («ընկեր», «բարեկամ», «զավակ» և այլն), ինչպես և «ընտանիքը» ենթական են փոխակերպումների, որպես սոցիալ-հոգեբանական նորմերի կրողներ, ուստի կարելի է ասել, որ դրանք չեն կարող դուրս մնալ «տվյալ ժամանակաշրջանում» գերիշխող «ոգուց» (Ալավերդյան Ա. 2012-2013:218): Թեև վերոնշյալ շատ հասկացություններ, կապված հասարակական սոցիալ-հոգեբանական մի շարք գործընթացների հետ, ենթակա են որոշակի փոխակերպումների՝ իրենց տարաբնույթ ընկալումների և «վարքաբանական» դրսևորումների առումով, բայց հիմնականում մնում են կապված իրենց ար-

մատական –արքեոտիպային ընկալումների հետ՝ «ընտանիք», այնուամենայնիվ մնում է «ընտանիք», «եղբայրը»՝ «եղբայր», «բարեկամը»՝ բարեկամ և այլն:

Բայց և պետք է նշել, որ նման հասարակական կյանքի կենդանի հոսքի հետ կապված «հասկացություններն» իրենց մեջ կրելով այդ կյանքի տարբեր դրսևորումները (ընկալումները), ներկայացնելով միջգիտակարգային բնագավառների՝ կրոնին, փիլիսոփայությանը, հոգեբանությանը, իրավունքին, սոցիոլոգիային և այլ գիտակարգերին հատուկ ընկալումները, չի կարող որոշակիորեն չփոխվել, չհարմարվել ժամանակին ու նրա գաղափարագեղագիտական շարժընթացին: Դրա համար էլ, ասենք, մարդը (ամուսինը) և կինը (կողակիցը) ներկա ժամանակահատվածում թերևս չեն կարող վերադառնալ առաքելական ժամանակներին և լիովին իրականացնել առաքելական հորդորը, որը վերաբերվում է հիմնականում կնոջը. «But I want you to understand that the head of every man is Christ, the head of a woman is her husband, and the head of Christ is God. Any man who prays on prophesies with his head covered dishonors his head, but any woman who prays or prophesies with her head unveiled dishonors her head-it is the same as her head were shaven (I Corinthians 11:-5)»

«Ուզում եմ, որ դուք իմանաք, թե ամեն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ Աստուած: Ամեն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարեանայ և գլուխը ծածկած պահի, անպատում է իր գլուխը: Եւ ամեն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարեանայ գլխաբաց, անպատում է իր գլուխը. որովհետև այնպէս է համարում, թե իբր գլուխը ածիլուած լինի...» (Ա. Կորնթ, 11:3-5):

Իհարկե, ներկա ժամանակաշրջանում, երբ տարափոխվում է մարդու ազատությունների և իրավունքների մասին օրենքը, ոչ բոլոր կանայք են ծածկում իրենց գլուխը, և ոչ էլ բոլոր այդ մարդիկ են գիտակցում, որ իրենց «գլուխը Քրիստոսն է», քանզի էապես փոխվել է կնոջ և տղամարդու փոխհարաբերության մասին պատկերացումը. կինը հավասար է տղամարդուն՝ իրավագրության առումով. նա պարտադրված չէ կրավորական դիրք գրավել տղամարդու նկատմամբ՝ անհատական, ընտանեկան և հասարակական կյանքում. ճիշտ հակառակը՝ իր հասարակական գործունեությամբ այսօր կինը համահավասար է տղամարդուն և կարող է նաև ղեկավարել նրան: Պարզ է, որ հասկացությունները, պահպանելով հանդերձ իրենց սկզբնատիպային նշանակություններ, որպես ազգալեզվամշակութային կյանքի և պատկերացումների «հաղորդիչներ» կարող են որոշակի փոխակերպումների ենթարկվել՝ իմաստային նորերանգների և նշանակությունների ձեռք բերման առումով (Маслова В.А. 1997 :53 ), քանի որ հասկացությունները ըստ հասկացությունների «գաղափարայնացված բազմաչափ ձևակազմություններ են» (Ляпин С.Х. 1997 : 16) և որպես այդպիսիք, որպես կոլեկտիվ գիտելիքի միավորներ ու բարձրագույն հոգևոր արժեքների ցուցիչներ՝ մի կողմից ծնում են մշակույթ, մյուս կողմից իրենք են ծնվում նրանից, այդ ընթացքում օժտվելով որոշակի առնշանակություններով՝ կապված ժամանակի ոգու հետ:

Այնպես որ հետազոտելով հասկացությունները տարածամանակյա կտրվածքով՝ ի հայտ են բերվում մշակույթի հիմնական մարդաբանական՝ էթնիկական, պատմական, հոգեբանական, լեզվական և մյուս բոլոր գործոնները՝ հաստատելով, որ հասկացույթն ունի միջգիտակարգային:

Նրա այդ բնույթը կապված հատկապես հասկացութային, կերպարային, արժեքանական, վարքարանական, էթիմոլոգիական, մշակութաբանական, սոցիոլոգիական, բարոյահոգեբանական և այլ դրսևորումների և առնշանակությունների ձեռքբերման հետ, քննության առարկա է դարձել լեզվամշակութային և հասկացութային հիմնախնդիրներով զբաղվող բազմաթիվ հետազոտողների կողմից (Телия В.Н. 1995, Маслова В.А. 2001, Карсик В.И. 2001, Ляпин С.Х. 1997, Вежбицкая А., 1999, Серебряников Б.А., 1970 և այլն):

Նշված հասկացությունները ժամանակի ընթացքում գլոբալ ուղղաձիգ համատեքստում ձեռք բերված ինչ-ինչ իմաստային կամ հուզական երանգավորումների պատճառով հաճախ հեռանում են իրենց սկզբնատիպային կամ արքեստիպային բուն գործողություններից, որոնցից, թվում է, ամենակարևորը դրանց այլ կերպ, այլ մտադրությամբ մի բան ասելն է, այսինքն՝ էֆֆեմիզը (հուն. Euphemismos՝ «լավ, phemi-խոսում եմ, ասում եմ, մեղմասություն»), որն հայերեն թարգմանվում է իբրև գեղասություն (Խլղաթյան Ֆ.Հ. 1976:26): Նման գեղասությունը շատ հին արմատներ ունի և առնչվում է հին տոհմացեղային հավատալիքների, առասպելական շրջանի ավանդույթների և կրոնական (Աստվածաշնչային) սյուժեների հետ: Բանն այն է, որ շատ աֆրիկյան և հնդկացիական, ինչպես նաև եվրոպական ժողովուրդների մոտ տարածված է եղել որոշակի իրերի, առարկաների, գործողությունների անվանումների վրա դրվող մոգարգելքը: Ջ.Ջ. Ֆրեզները նշում է այլացեղ մարդկանց հետ շփվելու, ուտելիքի, խմելիքի, դեմքը բացելու, դաշտանի մեջ գտնվող կանանց, սուր զենքերին, երկաթի գործածության, մազերին, հանգույցներին, անձնանուններին վերաբերող մոգարգելքներին (Ֆրեզեր Ջ.Ջ, 1987:234-

317): Ազգականների անուններին վերաբերող մոգաբլերների մասին խոսելիս ազգագրագետը բերում է հույժ հետաքրքիր տվյալներ. «Թվում է, թե ազգականների և բարեկամների հետ խոսելիս անձնանուններն օգտագործելու զգուշավորությունն պետք է վերանա կամ առվազն թուլանա: Իրականում հաճախ ամեն ինչ ճիշտ հակառակն է: Այս կանոնը իստ անշեղորեն կիրառվում է հենց արյունակցական ամենասերտ կապերով և հատկապես ամուսնական կապերով շաղկապված անձանց համար: Այդպիսի մարդկանց հաճախ արգելվում է ոչ միայն միմյանց անունով կոչել, այլև այնպիսի բառեր օգտագործել, որոնք իրենց անունների հետ ընդհանուր մի վանկ անգամ ունեն: Այս արգելքը մասնավորապես վերաբերում է ամուսիններին և կանանց, կնոջ ամուսնուն և ծնողներին, ամուսնու կնոջն ու հորը: Օրինակ՝ կաֆր կինը իրավունքը չունի հրապարակայնորեն ասել ծնվելու ժամանակ իր ամուսնուն կամ եղբարներից մկին տրրված անունը, ինչպես նաև իրենց սովորական իմաստով օգտագործել արգելված բառեր...այնուհետև կաֆրը կնոջը արգելվում է նույնիսկ մտքում ասել իր սկեսրարի և արական սեռի փոքրից մեծ բոլոր ազգականների անուններ: Եթե այդ անուններից մեկի շեծոված վանկը հանֆիպում է որևէ այլ բառում, ապա կինը պետք է փոխ այդ բառը կամ ավնկը: Այս սովորույթի շնորհիվ կանանց շրջանում կարծես ծնունդ է առել այսպես կոչված լեզու լեզվի մեջ, որը կաֆերը անվանում են կանանց բարբառ: Այդ «բարբառը» հասկանալը շատ դժվար է, մեղմասություններ (էֆեմիզներ) կազմելու որոշակի կանոններ գոյություն չունեն...Կաֆր տղամարդը իր հերթին չի կարող արտաբերել իր գոքանչի անունը, գոքանչն էլ՝ նրա անունը... Կիրգիզուհին ոչ մի դեպքում չի համարձակվի արտասանել իր

ամուսնու ավագ ազգականների անունները: Բելբես կղզու Մինասհասայի լճուրները ավելի հեռու ո՞ն գնում. Նրանց արգելվում է օգտագործել նույնիսկ այնպիսի բառեր, որոնք իրենց հնչողությամբ որևէ բանով հիշեցնում են մարդկանց անունները: Այդ կապակցությամբ հատուկ արգելք է դրվում աներոջ անվան վրա: Օրինակ, եթե նրա անունը Կալալ է, նրա փեսան չի կարող ձիուն կոչել սովորական kawalo բառով: Նա պարտավոր է գործածել ձիուն համապատասխանող բառակապակցություններ՝ «հեծնելու կենդանի» (sasakajan) Նումֆորների մոտ (Հոլանդական Նոր Գվինեա) ամուսինների բարեկամներին արգելվում է անուններով կոչել միմյանց: Տաբուավորվածների մեջ մտնում են կինը, գոքանչը, աները, քեռիները, մորաքույրները, հորեղբայրները, հորաքույրները, կնոջ մորաքույրներն ուն աներոջ եղբայրները, կնոջ պապի քույրերն ու եղբայրները, կնոր և տղամարդու ընտանիքի ի սերնդի բոլոր անդամները (կա մի բացառություն. Տղամարդը կարող է անունով կոչել իր աներձագին): Այս մոգարգելքները ուշի մեջ են մտնում նշանվելուց անմիջապես հետո, այսինքն նախքան ամուսնանանալը...» (նույն տեղում 298-299):

Այստեղ մեջբերվում են տաբուավորվածների մի շատ փոքր մասի անուններ՝ ցույց տալու համար, թե ինչպես են մոգարգելքների պատճառով առաջացել հասկացություններ, այսինքն՝ վերացարկված գոյություններ: Իսկ նման հասկացությունների առաջացումը կապված է ընդհանրացման և վերացարկման երեկույթի հետ, երբ կոնկրետ անվան փոխարեն տրվում են նրա հատկանիշները, ի գորգ դնելով էֆեմիզմը մեղմասության գործոնը: Այսպես օրինակ՝ մերձավոր, արյունակից մարդու անունը տալու փոխարեն ասվում է բարեկամ, ընկեր, մտերիմ կամ ծանոթ

(անգլերենով համապատասխան հաջորդականությամբ՝ companion, friend, associate, acquaintance), որոնք փաստորեն հոմանիշներ են և արտահայտում են արյունակցության կամ մտերմության աստիճանները : Դրանով իսկ թաքցվում են անունները, որոնք ըստ հինավուրց հավատալիքների, կարող էին ենթարկվել աեծքի, կապանքի, քանի որ ընկալվում էին որպես արդու մարմնի և հոգու օրգանական մասեր: Թվում է՝ այդ եղանակով է առաջացել շատ ու շատ հասկացություններ, որոնք վերաբերվում են թե ազգակցական, ամուսնական և բարեկամական կապերին, թե այլ երևույթների (օրինակ՝ սեռական գործողություններին, աստվաշներին և այլն): Այդ ուղիով առաջացել են բազմաթիվ հասկացություններ, որոնցում ընդհանրացվել, իմաստավորվել և բնորոշվել են ֆիզիկական անձինք՝ ձեռք բերելով «բանալի բառերի» արժեք, բառեր, որոնց շուրջը ստեղծվել են մշակութային ամբողջական ոլորտներ (Безбожцев А., 1999) : Կարելի է ասել, որ շատ հասկացություններ պարապես հետևանք են էֆեմիզմի՝ մեղմասության, որովհետև փոխանական տալու որոշակի մարֆու (ազգականաի, բարեկամի, ամուսնու) անունը տրվում է այդ մարդու ընդհանուր բնութագրիչները, դրանով իսկ իմաստավորելով նրա անձն ու դերը՝ ընտանեկան ու հաղարակական կյանքում: Ինչ-որ մի տեղ այդ էֆեմիզմները գաղտնասացություններ կամ նույնիսկ շրջասություններ են: Այդպիսիք կարող են համարվել օրինակ՝ գլխիս տեր ամուսնու փոխարեն, տան մեծ հոր փոխարեն, մեր տղան, զավակի կամ որդուս փոխարեն: Այդպիսի էֆեմիզմները կարելի է ցույց տալ տարբեր խոսույթներում, բանահյուսական տեսքներում, մասնավորապես Աստվածաշնչում: Բնորոշ են օրինակ՝ հետևյալները կապված ազգակցական բարեկամական և ամուսնական



փոխհարաբերությունների հետ, չհաշված այլ կարգի հասկացությունները, որոնք բազմաթիվ են սուրբ գրքում:

Then the God said "It is not good that the man should be alone, I will make him a helper fit for him" (Genesis 2:18):

«Տեր Աստված ասաց «լավ չէ, որ մարդը միայնակ լինի: նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար» (Ծննդ.2:18):

Այստեղ փոխանակ ասելու մի կին, ասվում է «a helper» (մի օգնական), որը ընդհանրացնում և բնորոշում է կնոջը՝ որպես իր ամուսնու օգնական:

Նույն Ծննդոցում Ադամը իր կնոջ մասին ասում է՝

«This at least is bones and flesh of my flesh, she shall be called Women, because she was taken out of Men

«Ադամն ասաց. «այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց:»» (Ծննդոց 2:23):

Նշված արտահայտությունները («ոսկոր է՝ իմ ոսկորներից», «մարմին է իմ մարմնից») և կին բառը ընդհանրացնում, բնորոշում և ճշգրտում են Եվայի՝ առաջին կնոջ ստեղծման բուն նպատակն ու գործունեության կերպը, ընդ որում այս համատեքստում woman (կին) բառը նշանակում է սիրելի և պատվական ընկեր և օգնական, ոչ թե աղախին մարդուն (Ծննդ. Բ 23-24 «ստեծեալ իբրև հարաւորի լրացնել զմարդն» (Բառարան սուրբ գրքոց 1999:276):

Խոսելով ապօրինի ամուսնությունների և կենակցությունների մասին, Աստվածաշունչը զգուշացնում է ազգակցի, արյունակցի, հոր, մոր և մյուս հարազատների դեմ մեղք գործելուց, որովհետև ազգակցությունն ու արյունը սուրբ են համարվում.

“None of you shall approach any one of his close relatives to uncover nakedness. I am the LORD. You shall not uncover the nakedness of your father, which is the nakedness of your mother; she is your mother, you shall not uncover her nakedness. You shall not uncover the nakedness of your father's wife; it is your father's nakedness. You shall not uncover the nakedness of your sister, your father's daughter or your mother's daughter, whether brought up in the family or in another home. You shall not uncover the nakedness of your son's daughter or of your daughter's daughter, for their nakedness is your own nakedness. You shall not uncover the nakedness of your father's wife's daughter, brought up in your father's family, since she is your sister. You shall not uncover the nakedness of your father's sister; she is your father's relative. You shall not uncover the nakedness of your mother's sister, for she is your mother's relative”.

«Ոչ մէկն իր արիւնակից ազգականին չձօտենայ նորա մերկութիւնը բանալու համար. Ես եմ Եհովան: Քո հօր մերկութիւնը կամ քո մօր մերկութիւնը չբանաս. Նա քո մայրն է. Նորա մերկութիւնը չբանաս: Քո հօր կնոջ մերկութիւնը չբանաս. Նա քո հօր մերկութիւնն է: Քո հօր աղջկայ կամ քո մօր աղջկայ՝ քո քրոջ մերկութիւնը, թէ տանը ծնուած լինի թէ դուրսը ծնուած, նորանց մերկութիւնը չբանաս: Քո որդու աղջկայ կամ աղջկանդ աղջկայ մերկութիւնը՝ նորանց մերկութիւնը չբանաս, ըստ որում նորանց մերկութիւնը քոնն է: Քո հօր կնոջ աղջկայ մերկութիւնը՝ որ քո հօրից ծնած քո քոյրը եղողն է՝ նորա մերկութիւնը չբանաս: Քո հօր քրոջ մերկութիւնը չբանաս. Նա քո հօր արիւնակիցն է: Քո մօր քրոջ մերկութիւնը չբանաս. Որովհետեւ նա քո մօր ազգականն է» (Ղևտ. 18:6-13).

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Սուրբ Գիրքը արգելքներ է սահմանում խառնամուսնությունների վրա, հորդորում է պահպանել արյան և ազգակցության սրբությունը, ընդ որում այդ ամենի մասին խոսում է պատշաճ-ությանը կամ մեղմասությամբ՝ շրջանցելով «կենակցել» բառը և դրա փոխարեն գործածելով «ամօթոյքը չբանաս» արտահայտությունը:

Աստվածաշնչյան բարոյագիտական պատկերացումները և ճանաչողական, հոգեբանական ու նաև գեղագիտական նշանակություն ունեցող օրենքներն ու հորդորները՝ կապված ազգակցական, բարեկամական ու ամուսնական հասկացությունների հետ, լայնորեն շրջանառվել են տարաբնույթ ոլորտներում (մարդաբանություն, լեզու, փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավաբանություն, բժշկություն, գեղագիտական գրականություն և այլն): Աշխարհի մեծագույն մտածողներն ու գրողները իրենց ստեղծագործություններում կիրառել են աստվածաշնչյան անձանց իմաստությունները և գիտելիքները, գեղարվեստորեն արտահայտելով դրանք իրենց դրամաներում (Շեքսպիր), չափածո խոսքում (Բայրոն), լեզվաճական, լեզվաբանաստեղծական ու վերնշանային մակարդակի տարաբնույթ ուսումնասիրություններում և այլն:

Այսօր, կապված վերը նշված ազգակցական, բարեկամական և ամուսնական կապեր արտահայտող հասկացությունների հետ, զարգացվում են կենսաբարոյագիտական նշանակություն ունեցող հարցեր, որոնք մեկնարկում են Աստվածաշնչից, իբրև ելակետային և կողմնորոշիչ արքե-տիպերի սկզբնաղբյուրից: Ասվածի առումով հույժ ուշագրավ են բիոթիկային և բիոիրավունքին, բիոթիկայի աշխարհայացքային ավանդույթներին (Седова Н. Н, Сереева

Н. В., 2010:330-336), բիոթիկայի աշխարհայացքային ավանդույթներին (Силуянова И. В., 1995), բիոթիկայի ֆենոմենին նվիրված աշխատանքները, որոնցում բիոտեխնիկական հեղափոխության դարաշրջանին բնորոշ հայացքով և գիտականա կտրվածքով են քննարկու, ի թիվս այլ հարցերի, նաև ազգակցությանը, բարեկամությանը և ամուսնակն կապերի վերաբերող հարցերը:

### Գրականության ցանկ

1. Ալավերդյան Ա. «Բարեկամ» հասկացույթի վերլուծությունը անգլերենում և հայերենում միջմշակութային տեսանկյունից: Աստղիկ, 2012-2013, Ե. Սահակ Պարթև, էջ 217 – 223:
2. Բառարան սուրբ գրոց, Եր., Ապոլոն, 1992, էջ 276:
3. Խլղաթյան Ֆ. Հ., Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., Լույս, 1976, էջ 25:
4. Ֆրեզեր Ջ. Ջ., Ոսկե ճյուղը, Ե., Հայաստան, 1989, 880 էջ:
5. Степанов Ю.С. Константы. Словарь русской культуры. Опыт исследования М., 1997.
6. Ляпин С.Х., Концептология : к стонавлению подхода. Концепции Вып. I Архангелск, 1997
7. Маслова В.А. Лингвокультурология, М., 2001
8. Вежбицкая Анна. Семантические универсали и описание языков М., 1999
9. Карасик В.И.О категориях лингвокультурологии. Языковая личность : Проблемы коммуникативной деятельности, Волгоград 2001

10. Серебрянов Б.А., Социальная дифференциация языка.-общее языкознание. Формы существования , функции, история языка, М., Наука, 1970
11. Седова Н.Н., Сергеева Н.В , биоэтика в пространстве культуры, Волгоград, Триумф, 2010 с. 330-336
12. Силуянова И.В., Биоэтика и мировоззренческие традиции-человек, 1195, N5, с. 125-132.

**Сюзанна Хачатрян**  
ЕГУ

### **Концепции как выразители многокультурных и морально-эстетических факторов**

*Слова, выражающие родственные, супружеские связи содержат информацию о духовной культуре общества. Концепция " друг" , "родственники", "сын" а также "семья" сохраняют свое первоначальное значение как выразители многокультурных и моральноэстетических факторов, но со временем они приобретают новые концепции и окраску, которые исследуются ноучным образом с помощью моральноэстетического метода. Приводятся соответствующие примеры, которые анализируются со своими армянскими переводными вариантами, тем самым, выявляя сходства и различии между этими языками.*

*Ключевые слова: родственные, супружеские связи, духовная культура, трансформация, сохранить значение, приобретать, коннотация.*

Suzanna Khachatryan  
YSU

## Concept as Markers of Linguoculture and Moralaesthetic Factors

*Words expressing kinship, matrimonial bonds bear information about the spiritual culture of the society. The concepts "friends", "relative", "son" as well as "family" preserve their primary meanings as markers of linguocultures out in time they acquire new connotation and coloring, which are best investigated by using the linguopoetic method. Adequate examples are abused and analyzed with their Armenian translation, revealing similarities and differences between these two languages.*

*Key words: kinship, matrimonial links, spiritual culture, transformation, preserves, meaning, acquires, connotation.*